

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/11

21 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վարդան Նազարեթյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՏՏ պետի 18.03.2014 թ-ի թիվ 73 որոշման դեմ:

Ա/Ձ Վարդան Նազարեթյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարության Արտաշատի տարածքային հարկային տեսչության պետի 18.03.2014 թ-ի թիվ 73 հրամանով (այսուհետ վիճարկվող ակտ) նախատեսվել է անհատ ձեռնարկատեր Վարդան Նազարեթյանից գանձել 417.662 դրամ պարտավորության գումար:

Վիճարկվող ակտի համաձայն պարտավորության գումարը ձևավորվել է Ա/Ձ Վարդան Նազարեթյանի (այսուհետ նաև գանգատաբեր) կողմից հարկային պարտավորությունները չկատարելու հիմքով: Մասնավորապես, վարչական մարմնի կողմից հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ 2014 թ-ի մարտի 12-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները հետևյալն են.

- եկամտային հարկ 202.707 դրամ (ապառք 155.000 դրամ, տույժ 47.707 դրամ),
- եկամտահարկ 4.966 դրամ (ապառք 2.596 դրամ, տույժ 2370 դրամ),
- արտոնագրային վճար 209.988 դրամ (ապառք 117.000 դրամ, տույժ 22.788 դրամ, տուգանք 70.200):

Համաձայն վարչական մարմնի հիմնավորման վերոհիշյալ պարտավորություններն առաջացել են 2013 թ-ի հունիս-հոկտեմբեր ամիսների եկամտային հարկի հաշվարկներից, 2008 թ-ի 3-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկից և 29.06.2013 թ-ի թիվ 2122596 ստուգման ակտից:

Գանգատաբերը գտնում է, որ վիճարկվող վարչական ակտը կայացվել է գործող օրենսդրության պահանջների խախտմամբ և ենթակա է վերացման հետևյալ հիմնավորումներով.

Սույն վարչական գործով պատասխանող վարչական մարմինը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, քանի որ պատշաճ կերպով չի ծանուցել հարուցված վարչական վարույթի մասին, գանգատաբերին զրկելով մասնակցելու իրականացվող լսումներին, ներկայացնելու ապացույցներ, հանդես գալու միջնորդություններով, որոնք ուղղված կլինեին գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտմանը:

Վիճարկվող վարչական ակտի կայացման հիմքում վարչական մարմնի կողմից դրվել է 29.06.2013 թ-ի թիվ 2122596 ստուգման ակտը, որը, սակայն, կազմվել է օրենսդրության պահանջների խախտմամբ:

Ըստ գանգատի, խախտվել են նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի, 38-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Վերը նշված փաստական և իրավական հիմնավորումները վկայում են, որ ՀՀ ՖՆ Արտաշատի հարկային տեսչության պետի կողմից 18.03.2014 թ-ին թիվ 73 հրամանը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 4-րդ, 8-րդ, 63-րդ, 69-րդ, 70-րդ հոդվածների դրույթները, գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Արտաշատի տարածքային հարկային տեսչության պետի 18.03.2014 թ-ի թիվ 73 հրամանը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Վարդան Նազարեթյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 18.03.2014 թ-ին ընդունել է թիվ 73 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 12.03.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Վարդան Նազարեթյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 417.662 դրամ, որը ենթակա է գանձման: Նշված պարտավորությունը բաղկացած է եկամտահարկի և արտոնագրային վճարի գումարներից: Մասնավորապես, եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմել է 202.707 դրամ, եկամտահարկի գծով՝ 4.966 դրամ, արտոնագրային վճարի գծով՝ 209.988 դրամ: Նշված պարտավորություններն առաջացել են 2013 թ-ի հունիս հոկտեմբեր ամիսների համար ներկայացված եկամտային հարկի հաշվարկներով, 2008 թ-ի 3-րդ եռամյակի եկամտահարկի հաշվարկով, իսկ արտոնագրային վճարի գծով պարտավորությունը առաջադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ 29.06.2013 թ-ի թիվ 2122596 ստուգման ակտով:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում գործում առկա ապացույցները հիմնավորում են Ա/Ձ Վարդան Նազարեթյանի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված և առաջադրված պարտավորությունները վերջինիս կողմից սահմանված ժամկետներում չվճարելու հանգամանքը, ինչը և հիմք է հանդիսացել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված կարգով դրանք գանձելու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ Որոշման հիմքում դրված է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ 29.06.2013 թ-ի թիվ 2122596 ստուգման ակտով արտոնագրային վճարի գծով առաջադրված պարտավորությունը, այն դեպքում, երբ նշված ակտը կազմվել է օրենսդրության պահանջների խախտմամբ, ապա այդ կապակցությամբ նշվեց հետևյալը:

«Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գրավոր վարչական ակտը կարող է գործել անորոշ կամ որոշակի ժամկետով: Անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ սույն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել»:

Տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ 29.06.2013 թ-ի թիվ 2122596 ստուգման ակտը հանդիսանում է անորոշ ժամկետով ընդունված գործող վարչական ակտ, քանի որ այն չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել: Հետևապես, գանգատում բերված պնդումներն այն մասին, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ 29.06.2013 թ-ի թիվ 2122596 ստուգման ակտը կազմվել է օրենսդրության պահանջների խախտմամբ, ըստ էության, հիմնավոր չեն, քանի որ այդ փաստը հիմնավորող որևէ ապացույց առկա չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Որոշումն իրավաչափ է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի ՏՀՏ պետի 18.03.2014 թ-ի թիվ 73 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**